

Պատկերապատման և պատկերի առաջին փառատոնը Երևանում

2008 թվականի հոկտեմբերի 3, 4, 5

«Ոսկե Նուռ մրցանակ» 2008-ի կանոնակարգը Հայաստանի Հանրապետության Մշակույթի Նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի Դեսպանության բարձր հովանու ներքո

Հոդված 1. Անգուլեն 16000, Նավարի պողոտա 492 հասցեում (Ֆրանսիա), գտնվող Հայաստանում Պատկերապատման Ջարգացման Միությունը, Երևանում Պատկերապատման միջազգային փառատոնի կապակցությամբ կազմակերպում է «Ոսկե Նուռ մրցանակ» մրցանակաբաշխությունը: Մասնակցության հայտերը ընդունվում են մինչև սույն թվականի սեպտեմբերի 22-ը՝ հաստատված փոստի կնիքով:

Հոդված 2. Մասնակցությունն անվճար է և նախատեսված 17 տարեկանից բարձր պատկերագրողների, նկարիչների, պատկերապատման հեղինակների համար: Մրցանակաբաշխությունն անց է կացվում միջազգային մակարդակով: Փառատոնը սահմանել է մրցանակային երեք կատեգորիա.

ա) Տարվա ընթացքում հրատարակված պատկերապատում կամ 6-8 նկարագրողումներից բաղկացած, ամբողջական սցենարով նախագիծ՝ նշելով հրատարակչի անունը:

բ) Տարվա ընթացքում ստեղծված կամ լույս տեսած մեկ կամ մի քանի «Սթրիփ» (1 տողի վրա 3-4 պատկերից բաղկացած կարճ պատմվածք)

գ) Տարվա ընթացքում ստեղծված կամ լույս տեսած մեկ կամ մի քանի Հումորիստական նկար

Հոդված 3. Մրցույթի մասնակիցները, ստորև նշված կարգով, պետք է ուղարկեն իրենց կողմից կատարված սևուսպիտակ կամ գունավոր նկարագրողման բնօրինակը (տպիչով տպված տարբերակները կհամարվեն բնօրինակ): Թեման ազատ է, սակայն նկարները պետք է կատարվեն պատկերապատումների ոգով: Ընդունվում են ցանկացած ոճի և ժանրի աշխատանքներ՝ բացառությամբ հասարակական կարգին և բարոյական նորմերին չհամապատասխանող գործերի:

Հոդված 4. Աշխատանքային թուղթը պետք է լինի A4 -ից A3 ձևաչափի (21x29,7սմ-ից մինչև առավելագույնը 29,7x42 սմ), ֆրանսիական ոճով՝ ուղղահայց դիրքով: Պատկերագրողներին կից պետք է ուղարկել ինքնակենսագրություն (CV): Փաթեթը պետք է ուղարկել փոստով կամ ներկայացնել Հայաստանում Ֆրանսիայի Դեսպանատուն՝ հարթ դիրքով, ոչ մի դեպքում չպետք է ուղարկել ծալված կամ գլանափաթեթով, (ոչ ուշ, քան մինչև սույն թվականի սեպտեմբերի 22-ը): Մասնակցության ցանկացած այլ տարբերակ բացառվում է: Յուրաքանչյուր պատկերագրողման էջի հակառակ կողմում պետք նշված լինեն մասնակցի ազգանունը, անունը, հասցեն և հեռախոսահամարը: Փաթեթները պետք է ուղարկել հետևյալ հասցեով՝

Հայաստանում Ֆրանսիայի Դեսպանատուն

Գրիգոր Լուսավորչի 8

Երևան – 0015

Երևանում Պատկերապատման և պատկերի առաջին փառատոն

«Ոսկե Նուռ մրցանակ» 2008-ին

Հոդված 5. Աշխատանքները ստանալու վերաբերյալ ստացական չի տրվելու, մրցույթի վերաբերյալ ոչ մի նամակի պատասխան չպետք է ակնկալել:

Հոդված 6. Ժյուրին, որի կազմում կընդգրկվեն Պատկերապատման արհեստավարժ մասնագետներ՝ պատկերապատման երկու ֆրանկոֆոն հեղինակ, մեկ ներկայացուցիչ Անգուլենի Պատկերապատման և պատկերի միջազգային կենտրոնից, 2 ներկայացուցիչ Հայաստանում Պատկերապատման Ջարգացման Միությունից, մեկ ներկայացուցիչ ՀՀ Մշակույթի նախարարությունից և Հայաստանում Ֆրանսիայի Դեսպանատան մշակութային բաժնի մեկ ներկայացուցիչ, երեք կատեգորիայից յուրաքանչյուրից կընտրի ստեղծագործություններ, որոնք փառատոնի ընթացքում կներկայացվեն «Ոսկե Նուռ

մրցանակ» 2008-ի ընտրանի» խորագրի ներքո: Ժյուրին կընտրի 3 դափնեկիր (յուրաքանչյուր կատեգորիայից մեկ հոգի): Արդյունքները կհայտարարվեն սույն թվականի հոկտեմբերի 5-ին՝ փառատոնի փակման օրը: Փաստաթղթերի ուսումնասիրությունը և քննարկումները կկայանան Երևանում:

Հոդված 7. Մրցանակները

Հայաստանում Պատկերապատման Ձարգացման Միությունը մրցույթում հաղթողների համար սահմանել է հետևյալ մրցանակները.

- **500 եվրո՝ պատկերապատմում կատեգորիայի համար**
- **300 եվրո՝ «Սթրիփ» կատեգորիայի համար**
- **150 եվրո՝ Հումորիստական նկար կատեգորիայի համար**

Գումարի չափը կճշտվի Երևանում Պատկերապատման և պատկերի առաջին միջազգային փառատոնի կողմից մինչև 2008 թվականի հոկտեմբերի 31-ը:

Փառատոնի գործընկեր ՅՅ Մշակույթի Նախարարությունը 3 հաղթողների կշնորհի պաշտոնական վկայականներ:

Փառատոնի մյուս գործընկերը՝ Հայաստանում Ֆրանսիայի Դեսպանատունը հաղթողներից յուրաքանչյուրին կհանձնի պատկերապատման 3 ալբոմ:

Հոդված 8. Երեք հաղթողների պատկերապատմումները կդառնան Երևանում Պատկերապատման և պատկերի առաջին փառատոնի սեփականությունը: Մյուս մասնակիցների պատերազարդումները իրենց կվերադարձվեն փառատոնի ընթացքում: Կազմակերպիչները պատասխանատվություն չեն կրում աշխատանքների կորստի, վնասվելու կամ գողացվելու դեպքում:

Հոդված 9. Փառատոնի կազմակերպիչները կարող են կրճատել, երկարաձգել, փոփոխել կամ չեղյալ հայտարարել սույն մրցույթը միայն հանգամանքների բերումով կամ անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) դեպքում: Տվյալ պարագայում նա պատասխանատվություն չի կրում:

Հոդված 10. Փառատոնի կազմակերպիչները կարող են օգտագործել 3 մրցանակակիրների աշխատանքները՝ ազդագրերի, գրքույկների, ծրագրերի և, ընդհանուր առմամբ, փառատոնին առնչվող ցանկացած տպագիր նյութի պատկերազարդման համար:

Կազմակերպիչները հետագայում չեն կարող օգտագործել մրցանակ չստացած մասնակիցների աշխատանքները մրցույթի շրջանակներից դուրս. դա հնարավոր է միմիայն կողմերից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները պատշաճ կերպով սահմանող ստեղծագործության տարածման և շահագործման արտոնության առկայության դեպքում՝ մասնավորապես վարձատրության և ժառանգական իրավունքների զիջման, հեղինակների բարոյական իրավունքները պահպանելու պայմանով:

Հոդված 11. Արդեն իսկ փառատոնին մասնակցելով՝ յուրաքանչյուր անհատ պարտավորվում է ենթարկվել սույն կանոնակարգի բոլոր կետերին՝ առանց բացառության:

Սույն կանոնակարգը փոխանցվել է ՅՅ Մշակույթի Նախարարությանը և Հայաստանում Ֆրանսիայի Դեսպանությանը:

Սույն կանոնակարգին կարող եք անվճար ծանոթանալ www.apbda.org կայքում:

Պատկերապատման և պատկերի առաջին փառատոնը Երևանում

«Ոսկե Նուռ մրցանակ» ազդագրի մրցույթ

APBDA

492, avenue de Navarre – 16000 Angoulême – France

www.apbda.org

Ժան Մարդիկյան - jean@verrazano.net

Ժան Սիրապյան - jsirapian@gmail.com +33 662 76 90 85 (Հայաստան +374 91 111 834)

Լորան Մելիքյան - lmelikian@wanadoo.fr + 33 611 75 12 48

Տիգրան Սանգասարյան - tigran@patkerphoto.com +374 93 820 529